

գործունեությունը: Մանավանդ, որ վերջինիս սպանությունից հետո էլ հայկական բնակչությանը դեռևս որոշիչ դեր ունեն Յդեսիայի խաչակրաց կոմսության կառավարման գործում: Ուսումնասիրողը մանրամասնաբար անդրադառնալով XIII դարի 20—30-ական թթ. Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում ստեղծված քաղաքական իրադրությունը (էջ 417, 421), այժաթող է անում Իկոնիայի սուլթաններ Փայ-բորադ I-ի և Փայխոսբուլ II-ի և Հեթում I-ի՝ հրկիւնդիւան դրամները¹⁴, որոնք հնարավորություն են տալիս ճշտել Կիլիկիայի և Իկոնիայի փոխհարաբերությունների բնույթը:

Գրքում անդի սղուխյան և թեմաների բազմազանության պատճառով քիչ ուշադրություն է հատկացված Կիլիկիայի հայկական թագավորության պետական սահմաններին, տնտեսա-

կան և առևտրական կապերին: Սակայն նշված փաստերը երբեք չեն նսեմացնում այն հսկայածավալ, կոթողային աշխատանքը, որով Կլոդ Մոթաֆյանը իր ավանդն է բերում Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ուսումնասիրության բնագավառում:

Ինչպես տեսանք, Կլոդ Մոթաֆյանը Կիլիկիա երկրամասի պատմությունը և աշխարհագրությունը դիտել է համաշխարհային մշակույթի և իրադարձությունների նախադրյալի վրա, ցույց տալով երկրամասի նշանակությունը և դերը քաղաքակրթության զարգացման գրեթե բոլոր շրջադարձային փուլերում: Այս իմաստով մենագրությունը ամփոփում է Կիլիկիա երկրամասի մասին մեր ունեցած գիտելիքները և նոր ուղիներ է մատնանշում Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստի պատմության ապագա ուսումնասիրողների համար:

¹⁴ Y. T. Nersessian. Attribution and dating of Armenian bilingual Trams (Armenian Numismatic Society. Special Publication, № 2). Los Angeles, 1983.

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

Արաբական աղբյուրները հայկական Ռուբեն Պողոսյան, Բեյրութ, 1988, 141

Վերջին տարիներին արաբական երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դրսեվորվում մասնավորապես դարասկզբին արևմտահայկական ապրած ողբերգության նկատմամբ: Բավական է նշել, որ արաբական Արևելքի տարրեր քաղաքներում լույս տեսած հայապիտանական գրեթե բոլոր հրատարակություններում, ինչպես նաև մամուլի էջերում բոտ լուխյա՝ արծարծվում է Հայկական հարցը Թուրքիայում՝ Օսմանյան կայսրության հակահայկական ավանդական քաղաքականությունը, արևմտահայկական ղանդվածային կոտորածները, հալածանքները և այլն¹: Դրա հետ մեկտեղ խիստ շահեկան և օգտակար աշխատանք է կատարվում հայկական ցեղասպա-

ցեղասպանության մասին. կազմող էջ (Արաբերեն):

նություն ակնատեսների հուշերը, պաշտոնական ալլեալլ փաստաթղթերն ու նյութերը արար ժամանակակից ընթերցողների դատին ներկայացնելու ուղղությամբ: Այդ երախտաշատ գործը մեծապես օգնում է արար մտավորականությանը՝ ճշմարիտ պատկերացում կազմելու հայ ժողովրդի դառը ճակատագրի, ոչ հեռավոր ողբերգական անցյալի և պատմական իրադարձությունների մասին:

1988 թ. այդպիսի շնորհակալ մի փորձ ձեռնարկեց Հալեպի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոս, դոկտոր Ռուբեն Պողոսյանը՝ արար ընթերցողների սեղանին դնելով «Արաբական աղբյուրները հայկական ցեղասպանության մասին» խորագրով հուշերի և փաստաթղթերի ժողովածուն: Ի դեպ, դա վերջին երկու-երեք տարիներին արաբական երկրորդ գործն է: 1986 թ. Բեյրութում նման մի ժողովածու («Հայկական կոտորածներ, վկայություններ և փաստաթղթեր» խորագրով) հրատարակեց սփյուռքահայ մշակութային առաջադեմ գործիչ Պարույր Երիցյանը:

Ժողովածուն լույս է տեսել Բեյրութում Դրադկացած է կազմողի նախարանից և չորս

¹ Ավելի մանրամասն տե՛ս Ն. Հ. Հովհաննիսյան. Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության մեջ. «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1, էջ 75—88: Նույն ի՝ Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսարանությունը արաբական պատմագրության մեջ. — Նույն տեղում, 1989, № 1, էջ 25—34:

Ջամիլներից: Գրքին կցված իր նախաբանում Ռ. Պողոսյանը խիստ դատապարտում է արդի Թուրքիայի հակահայկական պետական քաղաքականությունը. և պատմության խնդիրներն են (էջ 5—10): Նա իրավացիորեն գրում է, որ վերջին տարիներին Թուրքական կառավարող շրջանները լայն գործունեություն են սկսել աշխարհի ժողովուրդներին համոզելու համար, թե իր Օսմանյան կայսրությունը իր գոյության ողջ ընթացքում եղել է իդեալական մի պետություն, որի հպատակ բոլոր ժողովուրդները մեծապես օգտվել են իրենց շնորհված արտոնություններից՝ ազատությունից, դեմոկրատիայից և այլն: Սակայն դժվար չէ նկատել, որ դա լոկ պրոպագանդա է՝ հերյուրանք և խաբուսություն, ժամանակակից Թուրքիայի պրոպագանդայի ամրոցը ապարատը մեծ ճիգեր է գործադրում կեղծելու պատմական եղելությունները և դրանով իսկ հերքելու կայսրության ոճրագործությունները հպատակ ժողովուրդների նկատմամբ (էջ 5):

Հայկական հարցը և արևմտահայության ցեղասպանությունը արար մտավորականությանը ներկայացնելու համար Ռ. Պողոսյանը շերտաբանության մեջ է գրել բուն արաբական պատմական փաստաթղթեր, որոնք ծայրից ծայր մերկացնում են կայսրության հակաօղտության քաղաքականությունը: Դրանցից յուրաքանչյուրն առանձին մեղադրական է՝ ընդդեմ Թուրքական կառավարության, որի գործած ցեղասպանությունը ժրգրված հանցագործություն էր:

Ժողովածուի առաջին բաժնում (էջ 11—26) զետեղվել են Մեքքայի շերիֆ և էմիր Հուսեյն իրեն Ալիի 1916 թ. հունիսի 26-ի և 1917 թ. մարտի հայտնի մանիֆեստները, որոնք ժամանակին մեծ դեր խաղացին արաբների հակաթուրքական պայքարում: Շերիֆի մանիֆեստներում խստագույնս դատապարտվում է Օսմանյան կայսրության բիրտ քաղաքականությունը՝ հպատակ՝ մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, մասնավորապես շնչովում են Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի զանգվածային և վայրագ կոտորածները: Հուսեյն իրեն Ալին առանձնահատուկ մեծահոգություն է արտահայտում կայսրությունում Թուրքացման և ձուլման նպատակասլաց քաղաքականության առթիվ: Նա հատկապես անհանգստություն է ցուցաբերում պետության տարբեր անկյուններում արաբներին լեզվի, արաբական դպրոցների և այլ ձևերով ձուլման համար: Բացի այլևայլ փաստարկներից, Մեքքայի շերիֆն իր մանիֆեստներում վրդովմունք է հայտնում իսլամի գաղափարակրոնական ուս-

մունքի խեղաթյուրման ասպարեզում Թուրքների սկսած ակտիվ գործունեության կապակցությամբ:

Ժողովածուի երկրորդ բաժնում տեղ են գտել առաջադեմ գրող, բանաստեղծ Վալի ադ-Դին Ցաքանի՝ հուշերը, որոնք վերաբերում են 1890-ական թթ. հայկական կոտորածներին, հայ ժողովրդի ծանր կացությանը. Ազատության մարտիրոսների՝ մեր հայ եղբայրների քարոզերը՝ խորագրով հոգվածը (էջ 29—42), որը շրջանառության մեջ է դրվել առաջին անգամ, լույս է տեսել 1909 թ. Կահիրեում նրա հրատարակած «Հայտնին և անհայտը» գրքում: Վ. Ցաքանը արաբալեզու Թուրք այն մտավորականներից է, որ համարակողորեն բնութագրել է կայսրությունում տիրող իրավիճակը, մերկացրել սուլթան Աբդուլ Համիդ II-ի ազգահալած քաղաքականությունը, դատապարտել հպատակ ժողովուրդների նկատմամբ նրա կիրառած ջարդերը: Բանաստեղծի կարծիքով կայսրության այդ բիրտ քաղաքականության հետևանքը դարձան 1860 թ. Սիրիայի, 1877 թ. բուլղարների և նրանց հաջորդած ավելի ահել հայկական ջարդերը:

Անդրադառնալով օսմանյան պետության հակահայկական քաղաքականությանը և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին՝ Վ. Ցաքանը ընթերցողի ուշադրություն է հրավիրում հայկական ջարդերի մի քանի դրդապատճառների վրա: Ամենից առաջ նա խոսում է հայ-թրքական փոխհարաբերությունների մասին, ընդգծում քուրդ շեյխերի հակահայկական տրամադրությունները, որոնք պակաս դեր չխաղացին առհասարակ արևմտահայության կոտորածներում: Հայերի և թրքերի թշնամանքը դնալով այնքան խոր ընդթիվ կրեց, որ հան-

2 Վ. Ցաքանը (1873—1921 թթ.) ծնվել է Կ. Պոլսում, բարձրաստիճան Թուրքական ընտանիքում: Մանուկ հասակից սեղանավորվել է Եգիպտոս, ուր և կրթություն է ստացել, ապա վարել տարբեր պաշտոններ: Սկզբնական շրջանում նա եղել է կայսրության կողմնակից, բայց որոշ ժամանակ անց հակաթուրքական գործունեության՝ եգիպտացի ազատարարների կողմն անցնելու համար սուլթանի հրամանով ձերբակալվել և աքսորվել է Անատոլիա (Սվադ) 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունից հետո Վ. Ցաքանը վերադարձել է Եգիպտոս, որտեղ խմբագրել է եգիպտական մի քանի պարբերականներ: Աքսորի հուշերն է կազմում նրա «Հայտնին և անհայտը» դիրքը: Կայսրության քաղաքականության հարցերին են նվիրված Վ. Ցաքանի «Սև և էջեր», «Փոքրեք» գրքերը և այլն:

գեցերէն ինչպէս ընդհարումներով Դա հետզհետեւ յիշորէն անհանգստացրեց հայ առաջադեմ գործիչներին, որոնք փորձեցին կատարեցին լեզու գտնելու բուրդ բեկերի հետ և վերջ տալու այդ հակամարտութիւններին: Հայ հասարակական-գաղաքական դործիչներին, ըստ Վ. Յաքանի, ներսես պատրիարքը առաջին մարդն էր, որը խիստ մտահոգվեց հայ-քրդական փոխհարաբերութիւնների բարելավման խնդրով: Սակայն նրան խանգարեց Արդու Համիդը և խափանեց 1878—1879 թթ. Լրկու կողմերի հանդիպումը Կ. Պոլսում (էջ 32—33): Դեռ ավելին, յուրեք անգամ աշխատեց Վալակական կոտորածներում օգտագործել քրդերի նախնութիւնը և հայերի նկատմամբ նրանց ունեցած թշնամանքը: Նա ստեղծեց համիդյան զենդեր, որոնք դործուն մասնակցութիւն ունեցան արևմտահայերի 1890-ական թթ. կոտորածների իրականացման մէջ (էջ 33):

Վ. Յաքանը դառնում է, որ հայերը անկարագրելի հայածանքներ են կրել թուրքական բռնատիրական պետութիւն կողմից: Լինելով «Արևելայի» պարտ ողի ունեցող դավաճներ», նրանք փրկութիւն ճանապարհը որոնեցին միմիայն գիտութիւն և համընդհանուր առաջադիմութիւն մեջ: Արագ լծվելով այդ գործին՝ կարճ ժամանակամիջոցում հայութիւնը նկատելի դարձեց ապրեց կյանքի գրեթէ բոլոր բնագավառներում:

Ապա Վ. Յաքանը իր հողավածում համահոտակի անդրադառնում է հայկական կազմակերպութիւնների, քաղաքական կուսակցութիւնների ստեղծմանը, նրանց ղեկավարների դործունեութիւնը և այլն:

Կայսրութիւն դաժան քաղաքականութիւնը, արևմտահայութիւն իրավունքների ոտնահարումը, հայկական շրջաններում ձեռնարկած սարսափելի շարժերը առաջացրեցին հայերի օտարացումը պետութիւն մեջ, նշում է հեղինակը: Հայերի մի մասը անկախ Հայաստանի հույսով ապրեց կայսրութիւնում, մի մասը համբերատարութիւնը սպասեց, թե ինչ է լինելու, իսկ մի մասն էլ՝ հուսալքվելով մեկնեց Ամերիկա, եվրոպական երկրներ, թողեց հայրենիքն ու հաքաղատ ժողովրդին: Վ. Յաքանը գրում է, որ ինքը ականատես է եղել, թե անմեղ հայերը ինչպիսի տառապանքների էին ենթարկվում՝ բախելով թուրք վարչարարների դռները, թողնում հայրենիքը, ունեցվածքը, մուծում ծանր տուրքեր և հեռանում էին երկրից: Շատ հաճախ նրանք անվտանգ տեղ չէին հասնում՝ ճանապարհներին նրանց հետապնդում էին ավաղակների խմբերը և գերեզարում ու ուղնշացնում (էջ 36—37):

Այդ ամենի համար ափսոսանք հայտնելով, Վ. Յաքանը նշում է, որ «եթե մահմեդականները անաշու գտնվեին իրենց քրիստոնյա եղբայրների (իմա՝ հայերի—Ա. Փ.) նկատմամբ, դրանով իսկ անաշու կլինեին իրենք իրենց նկատմամբ և եթե միանային ու որպես մեկ բռնեցը հանգես գալին բռնատիրական պետութիւն դեմ, ապա վաղուց ազատութիւն ձեռք կբերեին՝ պահպանելով իրենց եղբայրների համակրանքը» (էջ 40—41): Վերջում առաջադեմ գրողը ավելացնում է, որ ավարտելով «այս սև էջը»՝ գիմում է ազատամիտ ընթերցողին, նրա խղճին՝ ճիշտ ըմբռնելու իր խոսքը և կիսելու տառապալալ հայի վիշտը ու արդար լինելու նրա դատի նկատմամբ (էջ 41—42):

Ժողովածուի հիմնական մասն են կազմում հայկական ցեղասպանութիւն արարականատես Յայիդ ալ-Ղուսայնի «Ջարդերը Հայաստանում» հայտնի հուշերը (էջ 45—100): Յ. ալ-Ղուսայնի հուշերը թարգմանվել և հրատարակվել են եվրոպական մի քանի լեզուներով, ունեն հայերեն երկու հրատարակութիւն: Առաջին անգամ՝ 1920 թ. Գարեգին Կիրակոսյանի թարգմանութիւնը լույս են տեսել Նոր Զուգայում: Ավելի ուշ, 1960 թ., Կահիրեում Գր. Պարսամյանի թարգմանութիւնը (Ֆրանսերենից) և ծանոթագրութիւններով իրականացվեց հայերեն երկրորդ հրատարակութիւնը: Յ. ալ-Ղուսայնի հուշերը ուսեւրեն (կրճատումներով) տեղ են գտել նաև «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի մեջ:

Գրքի վերջում Ռուբեն Պողոսյանի թարգմանութիւնը գետնվել են «Ժողովուրդների մշտական դատարան» Սորբոնի համալսարանում 1984 թ. ապրիլի 13—16-ին տեղի ունեցած դատական նիստի նյութերը՝ մեղադրական եզրակացութիւնը, դատավճիռը և այլն:

Ռ. Պողոսյանի կազմած «Արարական աղբյուրները հայկական ցեղասպանութիւն մասին» հուշերի և փաստաթղթերի ժողովածուն ողջունելի, շնորհակալ գործ է, ունի գիտաճանաչական կարևոր նշանակութիւն և արար մտավորականութիւնը հաղորդակից է դարձնում հայ ժողովրդի պատմութիւն ողբերգական էջերին:

Ա. Պ. ՓՈԼԱԳՅԱՆ

³ Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов (под ред. М. Г. Нерсисяна). Ереван, 1982, с. 398—408